



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱԾՆՁԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Մարտի 11-ին լրացավ հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության երեքհարյուրամյակը:

Այդ հիշարժան տարեթվի առթիվ, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում ստորագրեց Իր մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակը, որը տպագրվել է ամսագրի առաջին էջում, ուղղված մեր նվիրապետական բոլոր Աթոռներին, թեմերին, հոգևորականության և ժողովրդին, «ցնծությամբ ու ազնիվ հայարտությամբ» տոնելու «հայ ժողովրդի հոգևոր նվաճումներեն մին հանդիսացող Ս. Գրքի առաջին տպագրությունը», որովհետև «հազար վեց հարյուր վաթսուն և վեց տարեթիվը հայ մշակույթի պատմության մեծագույն հանգրվաններեն մին կհանդիսանա», — նշում է նշմարտորեն Հայոց Հայրապետը:

Հայրապետական սրբատառ կոնդակը հրահանգում է միաժամանակ հոկտեմբերի 8-ին, Սրբոց Թարգմանչաց տոնախմբությունը և «Հայ մշակույթի օր»-վա հանդիսությունը նվիրել Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակի հիշատակին, եկեղեցիներում կատարել հոգեհանգստյան պաշտոններ, ազգային-եկեղեցական իշխանությունների հովանավորությամբ կազմակերպել հանդիսավոր նիստեր, դասախոսություններ, ու հրատարակել ուսումնասիրություններ՝ նվիրված Աստվածաշնչի թարգմանության և տպագրության կրոնական, մշակութային, գիտական նշանակությանը և արժեքին:

Վեհափառ Հայրապետը առաջադրում է նաև, որ հայ մամուլը ևս կազմակերպված ձևով «արձագանքե այս համազգային հոբելյանին, առավել արժարժեղու և ամրապնդելու համար մեր ազգային մշակույթի արժեքներու զգացումը հայ նոր սերունդներու գիտակցության մեջ»:

Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրությունն իրագործվեց 1686 թվականին, նախապես կատարված մի շարք բարեջան փորձերից հետո, միշտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ և «ըստ բարձրագույնից հրամանաց» երջանկահիշատակ Հակոբ Դ Զուղայեցի (1655—1680) հայրենասեր և լուսամիտ հայրապետի՝ և տքնությանը Մայր Աթոռի միաբան, «Բանի Տեառն սպասաւոր Ոսկան Երևանցոյ, մին «յիմաստայեղց աշակերտացն Տեառն Խաչատրոյ մեծի վարդապետի», «յԱմատերտամ, ներ տպարանում Սրբոյն Էջմիածնի և Սրբոյն Սարգսի զօրավարի, ի թոռում Փրկչին 1686, իսկ Հայոց ՌԾԺԵ, յամսեանն մարտի մետանանի»:

Արդարև, Աստվածաշնչի տպագրությունը պատմական և մշակութային մեծ երևույթ էր հայ կյանքում: Դա Ե դարի Սահակ Մեսրոպյան եկեղեցական, մշակութային, հայրենասիրական մեծաքանակ գործի շարունակությունն էր տպագրության միջոցով և ուներ եկեղեցական, հայրենասիրական և ազգային սեպուր նշանակություն:

Գործեմբերգյան մեծ գյուտից (1484) հագիվ մի հիսնամյակ հետո, 1512 թվականին,

հայ ժողովուրդը տպագրության արվեստի իրագործումների և որոնումների համեստ մշակներից մեկն էր հանդիսանում՝ հրաշքի մասն մի բան ժամանակի քաղաքակիրթ և մշակույթ ունեցող ազգերի ընտանիքում, ճշում է պատմաբան Լեոն («Հայոց պատմություն», Գ, Երևան, 1946, էջ 224—225):

Այդ թվականներին Մայր Հայրենիքում տիրող քաղաքական, տնտեսական ծանր պայմանների բերումով, առաջին հայ գիրքը տպագրվում էր 1512 թվականին Վենետիկում, իսկ հայերեն առաջին Աստվածաշունչը՝ Հոլանդիայի հայ գաղութի ծոցում, 1666 թվականին: Հայ տպագրությունը այնուհետև մի որոշ ժամանակ ևս շարունակում էր զարգանալ գաղթօջախներում, մինչև 1771 թվականը, երբ Մայր Աթոռում բացվում էր առաջին հայ տպարանը, երջանկահիշատակ Սիմեոն Երևանցի մեծագործ կաթողիկոսի (1768—1790) օրոք:

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ծրագրերից մեկն էր հայ ժողովրդի լուսավորությունն և քաղաքական ազատությունը: Այդ նպատակով նա Մայր Աթոռում գումարում է Էջմիածնի գաղտնի ժողովը 1678 թվականին, աշխատում է Մայր Աթոռում տպարան բանալ, «տպագրական արհեստը ազգային կեդրոնի մեջ զարգացնել» (Օրմանյան), մանավանդ Աստվածաշունչ տպելու համար: Երբ այդ նրան չի հաջողվում, նա Հոլանդիա է ուղարկում Ոսկան վարդապետին նույն նպատակով:

1662 թվականին Ոսկան վարդապետը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ և օրհնությամբ, մեկնում է Հոլանդիա, իրեն հետ տանելով կաթողիկոսի հավանության արժանացած հայերեն Աստվածաշունչի ձեռագիր մի ընտիր օրինակ, ինչպես նաև «մի ամբողջ հրատարակչական ծրագիր», — ճշում է Լեոն: Ամստերդամում կար հայկական գաղութ, տպարան: Ամստերդամի տպարանները մասնագիտացել էին մանավանդ Աստվածաշունչի տպագրության մեջ:

Աստվածաշունչի տպագրությունը նյութական շատ մեծ գումարներ պահանջող ձեռնարկ էր: Ոսկան վարդապետ դեպի Հոլանդիա ճանապարհի վրա Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի կարգադրությամբ, այցելում է Լիվոռնոյի հայ գաղութը: Ջուղայեցի երեք հայ վաճառականներ՝ «Թամենց պարոն Ստեփանոսն, Քրեշենց պարոն Թեոդորոսն և Տեր Ասազենց պարոն Պետրոսն», Էջմիածնի սիրույն հանձն են առնում ամբողջ տպագրական ծախքը, պայմանով, որ «զանելեալ շահսն որ ի վաճառմանէ... տալ

Էջմիածնի» (հիշատակարան Աստվածաշունչի):

Ոսկան վարդապետը հասնում է Ամստերդամ և ձեռնամուխ լինում իր աշխատանքին: Նա Աստվածաշունչի տպագրության համար նոր տառեր, նոր տեսակի գլխազարդեր, թղչնագրեր է պատվիրում և որպես փորձ տպագրում է Այբեմարան և Քրիստոնեական, Շարակնոց և 1666 թվականի մարտի 11-ին ձեռնարկում է Ս. Գրքի տպագրության:

Աստվածաշունչի հայերեն առաջին տպագրությունը տևում է երկու տարի՝ 1666—1668: Դա հերոսական մի գործ էր, վեր մի մարդու կարողությունից և ուժերից, որը սակայն գլուխ բերվեց տեսիլք ունեցող մի համեստ հայ վարդապետի ջանքերով, նվիրումով Հայ Եկեղեցու և ժողովրդի, պաշտամունքով հայ մշակույթի, օրհնությամբ Ամենայն Հայոց հայրապետի և «տրչութեամբ Հոգւոյն Սրբոյ»:

Ոսկանյան Աստվածաշունչի տպագրության եկեղեցական, պատմական, մատենագրական արժեքը շատ բարձր է գնահատված:

«Արդարև մի մեծ գործ, վաղուց ի վեր պահանջ էր դարձել ազգի մեջ և շատերի տենչն էր դարձել, բայց մնացել էր երազ: ... Ոսկանը երկար ժամանակ աշխատանք էր թափել նրա վրա ոչ միայն իբրև տպագրող, այլ իբրև խմբագրող... Անսխալ, պատկերազարդ, մաքուր և գեղեցիկ տպագրությամբ և դուք հասկացողություն կկազմեք Ոսկանի գործադրած մեծ ջանքերի և հոգեկան մեծ կարողության մասին» (Լեո, Գ, էջ 448):

Ոսկանյան Աստվածաշունչի հրատարակությունը «մի հոյակապ գործ է տպագրական տեխնիկական տեսակետից և աննախընթաց աշխատանք մինչև իր ժամանակի հայերեն հրատարակությունը», — ճշում է Գարեգին Լևոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ (էջ 102):

Օրմանյան սրբազան «Ազգապատում»-ի Բ հատորում (էջ 2544), Ոսկանի անձի և գործի մասին գրում է.

«Տպագրության ձեռնարկին կատարելապես նահատակ մը եղավ տպարանի փոշիներուն մեջ թավալող այս սրբազան արքայիսկոպոսը, մինչ շատ դյուրին էր իրեն, յուր ծագումով և աստիճանով՝ փառքերու և հեշտություններու մեջ անցնել յուր կյանքը, յուր դասակից եկեղեցականներու մասն»:

Ոսկանի անձնավորությունը արժանի է մեր ազգին մտավոր զարգացման տեսակետին՝ մեծ երախտավորներու կարգը դաս-

վիլ և տպագրության իսկական մղում տվող ճանչցվի»:

1912—1913 թվականներին, բովանդակ հայ ժողովուրդը, երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական հրահանգով, նշեց հայ գրերի գյուտի (412—1912) 1500 և հայ տպագրության (1512—1912) 400-ամյակը, որպես հայ մշակույթի պանծալի տոներ:

1934—1935 թվականներին, Ամենայն Հայոց Ս. Խորեն Ա կաթողիկոսի հրահանգով, համազգային հանդիսությամբ նշվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանության ԺԵ դարադարձը (434—1934), որպես հայ մտքի, հայ մշակույթի փառատոն:

1966 թվականի հոկտեմբերին, Ամենայն Հայոց Հայրապետի մարտ 11 թվակիր կոնդակի ոգով և հրահանգով, համազգային միասնությամբ, ազգային արժանապատվության խորունկ զգացումով, որպես մշակույթ ունեցող Եկեղեցի և ժողովուրդ, կտոնենք Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության երեքհարյուրամյակը այն պայծառ գիտակցությամբ, որ «մեր օրերուն, ժողովուրդները մանավանդ իրենց մշակույ-

թի արժեքներով են որ կճանաչվին ու կգնահատվին իբրև այդպիսիներ: Ժողովուրդ մը իր մշակույթով է, որ կհանդիսանա վավերական ազգություն»,— ինչպես եզրակացնում է Վեհափառ Հայրապետն իր կոնդակում:

Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և հանձնարարությամբ, Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության երեքհարյուրամյակին իր երախտագիտությամբ, հարգանքի և աշխատանքի համեստ բաժինը բերելու է «Մուլնու Ավետարան»-ի լուսատիպ տպագրությամբ և Նոր Կտակարանի գրաքար հրատարակությամբ: Այս առթիվ, նույնպես, «Էջմիածին» ամսագիրը սեպտեմբեր—հոկտեմբեր իր միացյալ համարը նվիրելու է հայ մշակույթի այդ մեծ տոնի խորհրդին, նրա եկեղեցական-մատենագրական, գիտական նշանակության:

Փա՛ռք հայ մշակույթի բոլոր վաստակավորներին, «որք զծորանս Հոգւոյն արբին և ընդ ժամանակս ժամանակս զարդարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի, հուլուն զհօտ Նոր Իսրայելի»:

